գր. 18.04.2013թ.
կոդ՝ 11513151

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«22» մարտի 2013թ. N 42 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

«25» մարտի 2013թ.N 10 - Ն

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <<դ>> և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի <<դ>> ենթակետերի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մարտի 2-ի թիվ 276-Ն որոշման 5.1 կետի դրույթների կիրառումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին մասնագետների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջեմմա Բաղդասարյանին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Վահան Պողոսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՏԵՄ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2013թ. Նոյեմբեր թիվ 42 -Ն հրամանի

ՀՀ առողջապահության նախարարի
2013թ. Նոյեմբեր թիվ 10 -Ն հրամանի

ԿԱՐԳ

ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հաստատած մասնագետների ցանկից պատահական ընտրության միջոցով բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների (այսուհետ՝ հանձնաժողով) նիստերին մասնագետների մասնակցության հետ կապված հարաբերությունները:

2. Առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստերին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կամ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված մասնագետների ցանկում ներառված անձինք, այդ թվում՝ պոլիկլինիկաների տնօրենների փորձաքննության գծով տեղակալներ, Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (մարզերի) առողջապահության ոլորտի գլխավոր մասնագետներ (այսուհետ՝ մասնագետներ):

3. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերը (այսուհետ՝ աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հաստատած մասնագետների ցանկից պատահական ընտրության միջոցով ապահովում են մասնագետի մասնակցությունը հանձնաժողովի նիստերին:

4. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված մասնագետների ցանկը կոդավորում է և զետեղում համակարգչում, որում ընդգրկվում են հետևյալ տվյալները՝

1) մասնագետի անունը, ազգանունը, հայրանունը,
2) պաշտոնը, մասնագիտացումը,
3) աշխատանքի վայրը,
4) բնակության վայրը,
5) հեռախոսահամարները՝ բնակարանային, աշխատանքային, բջջային,
6) էլեկտրոնային փոստի հասցեն (դրա առկայության դեպքում):

5. Հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար մասնագետներն ընտրվում են այդ նպատակով համակարգչում զետեղված ցանկից՝ բժշկասոցիալական փորձաքննության անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

6. Աշխատակազմը բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տեղեկանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական վեբ կայքից (www: mss.am):

7. Աշխատակազմը հանձնաժողովի նիստի (բժշկասոցիալական փորձաքննության) գայացման օրվանից առնվազն 2 օր առաջ ընտրված մասնագետին տեղեկացնում է նրա ընտրվելու, հանձնաժողովի նիստի /բժշկասոցիալական փորձաքննության/ օրվա, ժամի և վայրի մասին:

8. Հանձնաժողովների նիստերին մասնագետի մասնակցության անհնարինության դեպքում, մասնագետը մեկօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է աշխատակազմին: Աշխատակազմը հաստատած մասնագետների ցանկից պատահական ընտրության միջոցով ապահովում է այլ մասնագետի մասնակցությունը հանձնաժողովի նիստերին:

9. Ընտրված մասնագետը հանձնաժողովում նույն օրը, նախապես՝ մինչև անձի փորձաքննություն իրականացնելը, ուսումնասիրում է փորձաքննվող անձի բժշկական փաստաթղթերը, նրա առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական պատկերացում գազմելու համար:

10. Բժշկասոցիալական փորձաքննության ընթացքում մասնագետը հիմնավորում է բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրումը՝ ներկայացնելով իր կարծիքն ու մասնագիտական եզրակացությունը փորձաքննվող անձի առողջական վիճակի, ֆունկցիայի խանգարման տեսակի և աստիճանի մասին:

11. Բժշկակասոցիալական փորձաքննության ժամանակ մասնագետը ունի խորհրդակցական ձայնի իրավունք, տրամադրում է մասնագիտական եզրակացություն, որը կցվում է է փորձաքննված անձի բժշկասոցիալական փորձաքննական գործին:

12. Հանձնաժողովների նիստերին մասնագետի մասնակցությունը գրանցվում է այդ նպատակի համար նախատեսված գրանցամատյանում և ստորագրվում նրա կողմից:

13. Հանձնաժողովը եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն՝ մասնագետների մասնակցության վերաբերյալ:

14.Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը կիսամյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում ամփոփ տեղեկատվություն՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին մասնագետների մասնակցության վերաբերյալ: